հում էին եղան, կովի, ձիու, երբեմն նաև որսած եղջերուի գանգ։ Տան մուտքի գլխին ցցում էին կօզնու՝ ոզնու ասեղնավոր մաշկի կտոր, որը կոչված էր չար մարդու աչքը ծակելու։ Արտը և այգին չար աչքից պահելու համար տնկում էին որոշ ձևով հյուսված ճյուղ՝ մեծ մասամբ բոշնի ծառի, զատկական ախարի արյան մեջ թաթախած։ Զվին հատկացվում էր ոչ միայն քաշկէրին պահպանելու զորություն, որի պատճառով ձու էին ձգում նաև ջրի մեջ երեխային լողացնելիս, այլ նաև չար հայացքը գրավելու՝ երկաթի կամ օրհնված ասեղի պես և նրա հետևանքներն իր վրա վերցնելու։ Ձու էին դնում գորգ կամ շալ գործելիս դազգանի կողքին, երբեմն և շերամի մոտ։ Գրեթե ամեն տան պատի ամենաերևան տեղում կախում էին զանազան գույնի թելերով ծածկված նախշուն ձու, որը տուն ներս մտնող մեկը հենց անմիջապես նկատի և հայացքը նրան դիպչի։ Որպեսզի ապագայում ոչ մի չար աչք չդիպչի նոր գնած կովին, եղանը, գոմեշին՝ անասունը տուն բերելիս ճակատին ձու էին զարնում[125]։ Հայացքը կարող էր լինել ոչ միայն չար, այլև ծուռ։

Չար աչքից, ինչպես և ծուռ աչքից և այլ հնարավոր վնասումներից պաշտպանում էին և այն գիրէրը, որ գրել էին տալիս գրբացներին և ամենից հաճախ մոլլաներին մի երկարուն թղթի վրա, որը եռանկյունաձև ծալելուց հետո դարձյալ եռանկյունաձև փաթաթում կամ մի այլ թղթի կամ մի գունավոր՝ գլխավորապես կապույտ կտորի մեջ և կտորը կարում այնպես, որ կարելիս ասեղը չկպչի գրին, ապա կախում էին օրորոցից, մանկան կրծքից կամ ուսից։ Դրանք կրում էին մոգական զորություն ունեցող բառեր և նախշեր, մեծ մասամբ գիր անողների կողմից հնարած, երբեմն էլ ավանդաբար սերնդից սերունդ յուրացրած։ Խոսքի զորությունը սակայն առանձնապես դրսևորվում էր աղօթքների մեջ։ Աղօթողները մեծ մասամբ կանայք էին, գլխավորապես պառավ կանայք, որոնք աղօթքները սովորած էին լինում ուրիշ, արդեն նրանց զորությունը փորձած և կիրառած մեկից։ Տղամարդ աղօթողնէր շատ սակավ էին պատահում, այն էլ գայլի բերան կապող աղօթքնէր ասողնէրի մեջ։ Մեզ չհաջողվեց գրանցել այդ դեպքերում ցածր ձայնով և զանազան իրերը ձեռքին բռնած հատուկ շարժումներով մրմնջած աղօթքները։ Դրա պատճառը մասամբ այն էր, որ աղօթողների մեջ արմատացած էր այն համոզմունքը, թե չի կարելի աղօթքը ասել ուրիշին, մանավանդ կնոջը՝ աղօթքը կկորցնի իր ուժը։ Այդպիսի աղօթքներն իրենց բովանդակությամբ և ձևով հիշեցնում են այն գրավոր աղօթքները, որոնք դրոշմված են մագաղաթի կամ թղթի երկար յէրիզների վրա և հայտնի են հմայիլ հատուկ անունով։ Հմայիլները դրվում էին երեխաների և սովորաբար նաև հիվանդների վերմակի կամ բարձի տակ, երբեմն կարվում էին մանուկների զգեստների մեջ։ Այդ հմայիլների զորությունը փրկում էր ոչ միայն չար աչքից, այլև քաշկէրի պատճառած վնասումներից։ Թե՛ աղօթքների և թե՛ գիր-հմայիլների, նույնպես և յէրիզների հմայիլների մեջ ցուցաբերվում էր ոչ միայն չար աչքի դեմ ուժը, այլ առհասարակ խոսքի մագիկ զորությունը, որով ոչ թե բժշկվում կամ պաշտպանվում էին պատճառած չարիքից, այլև առաջ էր բերվում ցանկալի՝ բարի կամ չար հետևանք։

125 Պետք է նշել, որ ծննդկանին հենց առաջին առաջարկված կերակուրը, որը շտապում էին ուղարկել բարեկամները, ձվածեղն էր, հենց նույն ծննդկանին քաշկէրից պաշտպանելու նպատակով, որոնք նրա ապատվելուց հետո էլ շարունակում էին վխտալ նրա շուրջը։ Փեսային հյուրասիրելիս և պսակի ճանապարհին բարեկամների կողմից տներից դուրս բերվող սինինէրի վրա անպայման մատուցվում էր ձվածեղ։